**ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ**
**ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ**
**ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ**

| | |
|---|---|
| *Հրավերի ամսաթիվ* | 2010 թ. օգոստոսի 24 |
| *Վարկ* | 2351-ARM /2467-ARM Գյուղական ճանապարհահատվածի ծրագիր |
| *Պայմանագիր No. և անվանում* | Պայմանագիր No ICB-CW-ROAD-01/2010, ճանապարհների վերականգնման աշխատանքներ (Լոտեր 1-6) |
| *Առաջարկների ներկայացման վերջնաժամկետ* | 2010թ. հոկտեմբերի 5, ժամը 15:00 (տեղական ժամանակով) |

1. Հայաստանի Հանրապետությունը Ասիական Զարգացման Բանկից (ԱԶԲ) վարկ է ստացել Գյուղական ճանապարհահատվածների ծրագրի իրականացման համար: Այս վարկի մի մասը կօգտագործվի վերոհիշյալ պայմանագրով վճարումների կատարման համար: Մրցույթը բաց է ԱԶԲ անդամ երկրներից բոլոր մասնակիցների համար:
2. «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ը, որպես Իրականացնող Գործակալություն, ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության (Գործադիր գործակալություն) անունից հրավիրում է իրավունակ մասնակիցներին ներկայացնել իրենց առաջարկությունները փակ ծրարներով` հետևյալ ճանապարհահատվածների վերականգնման աշխատանքների («Աշխատանքներ») իրականացման համար

| Լոտ No | Ճանապարհահատվածներ |
|---|---|
| 1 | Կապ 31, Ա/Ճ Անտառամեջ-Ջորավանք-Դպրաբակ-Այգուտ-Մարտունի-Գետիկ-Թթուջուր-Ճամբարակ-Աղբերք-Մ14, կմ 15+240- կմ 20+000 |
| 2 | Կապ 31, Ա/Ճ Անտառամեջ-Ջորավանք-Դպրաբակ-Այգուտ-Մարտունի-Գետիկ-Թթուջուր-Ճամբարակ-Աղբերք-Մ14, կմ 20+000 – կմ 25+000 |
| 3 | Կապ 31, Ա/Ճ Անտառամեջ-Ջորավանք-Դպրաբակ-Այգուտ-Մարտունի-Գետիկ-Թթուջուր-Ճամբարակ-Աղբերք-Մ14, կմ 25+000 – կմ 32+020 |
| 4 | Կապ 31, Ա/Ճ Անտառամեջ-Ջորավանք-Դպրաբակ-Այգուտ-Մարտունի-Գետիկ-Թթուջուր-Ճամբարակ-Աղբերք-Մ14, կմ 32+020 – կմ 39+300 |
| 5 | Կապ 31, Ա/Ճ Անտառամեջ-Ջորավանք-Դպրաբակ-Այգուտ-Մարտունի-Գետիկ-Թթուջուր-Ճամբարակ-Աղբերք-Մ14, կմ 39+300 – կմ 44+000 |
| 6 | Կապ 31, Ա/Ճ Անտառամեջ-Ջորավանք-Դպրաբակ-Այգուտ-Մարտունի-Գետիկ-Թթուջուր-Ճամբարակ-Աղբերք-Մ14, կմ 44+000 – կմ 48+725 |

3. Միջազգային բաց մրցույթը պետք է անցկացվի ԱԶԲ -ի մեկ փուլ-մեկ ծրարով մրցութային ընթացակարգին համապատասխան: Աշխատանքները տրոհված են մի շարք պայմանագրերի: Մրցույթի մասնակիցները, որոնք որակավորմամբ բավարարում են մեկ կամ մի քանի լոտերի, կարող են մրցակցել մեկ կամ մի քանի լոտերի համար: Այն դեպքում, երբ մասնակիցը կցանկանա առաջարկել զեղչ մեկից ավելի պայմանագրեր շնորհվելու դեպքում, նրան կտրվի այդ հնարավորությունը, պայմանով, որ այդ զեղչը ընդգրկված լինի մրցութային հայտի մեջ կամ գրավոր ձևով ներկայացված լինի մինչև մրցութային առաջարկությունների հանձնման վերջնաժամկետը:
4. Մրցույթի մասնակիցը, որպես առանձին կազմակերպություն, կամ որպես համատեղ ձեռնարկություն, պետք է համապատասխանի Մրցութային Փաստաթղթերում սահմանված բոլոր որակավորման չափանիշներին, ինչպիսիք են շինարարական աշխատանքների առնվազն 3 տարվա փորձը, վերջին 3 տարիների շինարարության միջին տարեկան համապատասխան շրջանառությունը, վերջին 3 տարիների ընթացքում որպես կապալառու, գլխավոր կապալառու կամ ենթակապալառու իրականացրած նույն չափի և բարդության առնվազն 1 նմանատիպ պայմանագրի առկայությունը, պահանջվող մեքենա-սարքավորումների և փորձառու հիմնական աշխատակազմի առկայությունը: Վերը նշված պահանջների մանրամասները բերված են Մրցութային Փաստաթղթերում:
5. Մրցութային փաստաթղթերն անգլերեն լեզվով կարելի է ձեռք բերել 2010թ. օգոստոսի 25-ից 2010թ. հոկտեմբերի 4-ը` ժամը 10:00-ից մինչև 17:00 աշխատանքային օրերին:Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և մրցութային փաստաթղթերին ծանոթանալու համար մրցույթի մասնակիցները պետք է դիմեն

«Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրեն Կ.Գևորգյանին հետևյալ հասցեով `

**Հայաստանի Հանրապետություն, 375010 Երևան,**
**Նալբանդյան 28, 3-րդ հարկ**
**Հեռախոս՝ 3741-548-890 կամ 3741- 528-333**
**Ֆաքս՝ 37410- 56-24-35**
**Էլ. փոստ՝ ahpiu@netsys.am**

6. Մրցութային փաստաթղթերը անգլերեն լեզվով ձեռք բերելու համար մրցույթի մասնակիցները պետք է՝

- գրավոր դիմեն վերոհիշյալ հասցեով՝ խնդրելով իրենց տրամադրել պայմանագիր **No ICB-CW-ROAD-01/2010** –ի մրցութային փաստաթղթերը:
- վճարեն վերադարձման ոչ ենթակա հետևյալ գումարը՝

*Լոտ 1-ի համար 14 000 ՀՀ դրամ (կամ համարժեքը ԱՄՆ դոլարով)*
*Լոտ 2-ի համար 14 000 ՀՀ դրամ (կամ համարժեքը ԱՄՆ դոլարով)*
*Լոտ 3-ի համար 13 000 ՀՀ դրամ (կամ համարժեքը ԱՄՆ դոլարով)*
*Լոտ 4-ի համար 13 000 ՀՀ դրամ (կամ համարժեքը ԱՄՆ դոլարով)*
*Լոտ 5-ի համար 12 000 ՀՀ դրամ (կամ համարժեքը ԱՄՆ դոլարով)*
*Լոտ 6-ի համար 12 000 ՀՀ դրամ (կամ համարժեքը ԱՄՆ դոլարով)*

Պաշտոնական սուրհանդակի միջոցով փաստաթղթերի փոխանցման դեպքում պահանջվում է վճարել լրացուցիչ 35000 ՀՀ դրամ (կամ համարժեքը ԱՄՆ դոլարով) մրցութային փաստաթղթերի յուրաքանչյուր լրակազմի տեղափոխման և հանձնման համար:
Բոլոր վճարվող գումարները պետք է փոխանցվեն **«Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ** –ի հետևյալ հաշվեհամարներին՝

<u>ԱՄՆ դոլարով վճարելու դեպքում</u> – Զարգացման Հայկական Բանկ, Երևան, Հայաստան
Հաշիվ No 1810001104923311
<u>ՀՀ դրամով վճարելու դեպքում</u> – Զարգացման Հայկական Բանկ, Երևան, Հայաստան
Հաշիվ No 1810052104953311

7. Մասնակիցները պետք է իրենց առաջարկները ներկայացնեն մինչև **2010 թ. հոկտեմբերի 5-ը, ժամը 15: 00 (տեղական ժամանակով)** հետևյալ հասցեով՝

**375010 Հայաստանի Հանրապետություն, Երևան, Նալբանդյան փող. 28, 3-րդ հարկ**
**«Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ**

Բոլոր մրցութային առաջարկների հետ մեկտեղ պետք է ներկայացվի բանկային երաշխիք՝ ստորև նշված գումարների չափով և տարադրամով կամ համարժեք չափով ազատ փոխանակվող տարադրամով՝

*Լոտ 1-ի համար 12 500 000 ՀՀ դրամ (կամ համարժեքը ԱՄՆ դոլարով)*
*Լոտ 2-ի համար 14 000 000 ՀՀ դրամ (կամ համարժեքը ԱՄՆ դոլարով)*
*Լոտ 3-ի համար 12 000 000 ՀՀ դրամ (կամ համարժեքը ԱՄՆ դոլարով)*
*Լոտ 4-ի համար 9 500 000 ՀՀ դրամ (կամ համարժեքը ԱՄՆ դոլարով)*
*Լոտ 5-ի համար 15 500 000 ՀՀ դրամ (կամ համարժեքը ԱՄՆ դոլարով)*
*Լոտ 6-ի համար 13 500 000 ՀՀ դրամ (կամ համարժեքը ԱՄՆ դոլարով)*

Ուշացումով ներկայացված հայտերը կմերժվեն:Մրցութային առաջարկները կբացվեն դրանց ներկայացման վերջնաժամկետից անմիջապես հետո ՝ մասնակիցների այն ներկայացուցիչների ներկայությամբ, ովքեր կնախընտրեն ներկա գտնվել առաջարկների բացմանը, որը կկայանա վերը նշված հասցեում 2010թ. հոկտեմբերի 5-ին տեղական ժամանակով 15:00-ին:

8. Առաջարկների գնահատման համար չի կիրառվելու տեղական նախապատվության ԱՁԲ-ի պայմանը: